ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ

Հավելված 2
Հաստատված է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության նախագահի
2025 թ. օգոստոսի 20-ի թիվ 90-Լ կարգադրությամբ

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔԻ, ՎԱՃԱՌՔԻ ԵՎ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Պատասխանատու Ստորաբաժանումներ	Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրինություն Մանրածախ բիզնեսի գծով տնօրինություն Թվային բանկինգի տնօրինություն,
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	28/08/2025
Այլ դրույթներ	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿԸ 3
ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3
ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 4
ԳԼՈՒԽ 4. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԸ 5
ԳԼՈՒԽ 5. ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ 7
ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՐՈՇ ԿԱՆՈՆՆԵՐ 7
ԳԼՈՒԽ 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 9

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «Այդի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿԸ

1. Սույն հրապարակային պայմանները /այսուհետ նաև Պայմաններ/ կարգավորում են «Այդի Բանկ» ՓԲԸ-ի և Հաճախորդի միջև առևտրային հաշիվներով արտարժույթի առքի, վաճառքի և փոխանակման հետ կապված հարաբերությունները:

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

2. Սույն փաստաթղթում օգտագործվող սահմանումներն ու հապավումներն ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***Բանկ***՝ «Այդի Բանկ» ՓԲԸ:
2) **Կանոններ՝** իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի բանկային հաշիվների բացման և սպասարկման կանոններ,
3) **Հաճախորդ**՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ (այդ թվում՝ Անհատ ձեռնարկատեր), ով հանդիսանում է արտարժույթով գործարք կատարելու նպատակով Բանկում բացված Առևտրային հաշվի հաշվետեր, բացառությամբ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների,
4) ***Համակարգ***՝ rate.am ինտերնետային կայքէջ կամ առցանց բջջային հավելված:
5) ***Գործարք***՝ արտարժույթի առքին, վաճառքին և փոխանակմանն ուղղված գործողություններ /այդ թվում՝ պայմանագրի կնքման ձևով/:
6) ***Անձնական Գրասենյակ***՝ Հաճախորդին իր արտարժութային գործարքների վերաբերյալ տեղեկատվության դիտման հնարավորություն և/կամ նման Գործարք կատարելու հնարավորություն ստեղծող Համակարգում առանձին տիրույթ:
7) ***Առևտրային հաշիվ***՝ Բանկում միայն Գործարքի կատարման նպատակով բացված հաշիվ, որի միջոցով Հաճախորդը հնարավորություն ունի կատարել Գործարք միայն Համակարգի միջոցով: Ընդ որում, տվյալ հաշվից ելքագրումներ կարող են կատարվել միայն Բանկում բացված նույն արժույթով բանկային հաշիվների (բացառությամբ՝ ֆիզիկական անձանց քարտային հաշիվների)՝ միայն Համակարգի միջոցով տրված վճարման հանձնարարականի հիման վրա:
8) ***Բանկային հաշիվ***՝ Բանկում բացված ցանկացած տեսակի բանկային հաշիվ:
9) ***ՀՀ***՝ Հայաստանի Հանրապետություն:
10) ***Կցում***՝ Բանկում Հաճախորդի Առևտրային և Բանկային հաշիվների կցում Համակարգին, որի արդյունքում Անձնական Գրասենյակում հնարավորություն է ստեղծվում Առևտրային Հաշիվների միջոցով Գործարքների կատարման հայտեր ներկայացնել կամ Կցված Հաճախորդի Բանկային հաշիվներին դրամական միջոցների փոխանցումներ իրականացնել՝ համաձայն սույն պայմաններում նկարագրված գործընթացի: Բանկային հաշիվները կցելու արդյունքում

Համակարգին տրամադրվում է միայն Անձնական գրասենյակում հաշվեհամարի պահպանման և ցուցադրման հնարավորություն:

11) ***Օգտանուն***՝ rate.am ինտերնետային կայքէջի կամ առցանց բջջային հավելվածի անձնական գրասենյակի օգտագործման պայմաններում սահմանված օգտանուն:

12) ***Գաղտնաբառ***՝ rate.am ինտերնետային կայքէջի կամ առցանց բջջային հավելվածի անձնական գրասենյակի օգտագործման պայմաններում սահմանված գաղտնաբառ:

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. Բանկը Համակարգի հետ տեխնիկական համակցման միջոցով Հաճախորդներին տրամադրում է Անձնական Գրասենյակի միջոցով Առևտրային հաշվով գործարքներ իրականացնելու, ինչպես նաև դրանց վերաբերյալ տեղեկատվության դիտման հնարավորություն:

4. Հաճախորդը Բանկի հետ Գործարք կնքելու և իրավահարաբերությունների մեջ մտնելու համար կարող է կցել իր ընտրած Առևտրային հաշիվները և Բանկային հաշիվները Անձնական գրասենյակին՝ Անձնական գրասենյակում և Բանկի առցանց համակարգում սահմանված քայլերի հաջորդականությունը կատարելու միջոցով:

Ընդ որում, Հաճախորդի կողմից իր Առևտրային հաշիվները և Բանկային հաշիվները սահմանված կարգով Անձնական գրասենյակին կցելու դեպքում, Հաճախորդը դրանով տալիս է իր անվերապահ համաձայնությունը Համակարգին և Բանկին իր ընտրած Առևտրային հաշիվները և Բանկային հաշիվները արտացոլել Անձնական գրասենյակում և ստանալ հասանելիություն իր Առևտրային հաշիվներին և Բանկային հաշիվներին **ամեն անգամ** մուտք գործելով Անձնական գրասենյակ, ինչպես նաև իր Առևտրային հաշիվների և Բանկային հաշիվների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունը տրամադրել Համակարգին: Առևտրային հաշիվներին և Բանկային հաշիվներին հասանելիության ստացում**ը** ներառում է Առևտրային հաշիվների և առկա դրամական միջոցների դիտման, Առևտրային հաշիվների տնօրինման, Բանկին վճարման հանձնարարականներ, դիմումներ տալու, իսկ Բանկային հաշիվների դեպքում՝ հաշվեհամարի դիտման հնարավորությու**ն,** :

Առևտրային հաշիվները և Բանկային հաշիվները կցելուց և Առևտրային հաշիվներին հասանելիություն ստանալուց հետո Հաճախորդը ցանկացած ժամանակ Պայմաններով սահմանված կարգով նույնականանալու միջոցով մուտք գործելով Անձնական գրասենյակ՝ կարող է կնքել Գործարքներ Բանկի հետ՝ առանց լրացուցիչ նույնականանալու և Բանկի հետ կապ հաստատելու, բացառությամբ Պայմաններով սահմանված դեպքերի:

5. Առևտրային հաշիվները և Բանկային հաշիվները կցելուց և Առևտրային հաշիվներին հասանելիություն ստանալուց հետո Անձնական Գրասենյակի միջոցով գործարքների

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «Այդի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

իրականացման հասանելիություն ստանալու համար Բանկը սահմանում է պատշաճ նույնականացման պահանջ: Ընդ որում՝ սույն կետով նախատեսված պատշաճ նույնականացում է համարվում Անձնական գրասենյակ մուտք գործելու համար կատարված նույնականացումը, մինչդեռ «հաշիվների Կցում» գործողության կատարման դեպքում նույնականացումը կատարվում է Բանկի կողմից սահմանված քայլերի հաջորդականությունը կատարելու միջոցով: Հաճախորդը գիտակցում է, որ Բանկը Գործարքների կատարման համար կարող է սահմանել նույնականացման այլ լրացուցիչ պայմաններ ևս, որոնց առկայության դեպքում Գործարքները կարող են կատարվել այդ պայմանների ապահովման դեպքում:

6. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ Անձնական Գրասենյակի օգտագործման նկատմամբ բացի Պայմաններից կիրառելի են նաև Համակարգի կողմից նախատեսված պայմանները:

7. Հաճախորդը Պայմաններին համաձայնություն տալով՝ համաձայնում է նաև **ամբողջական** ծավալով գույքային պատասխանատվություն կրել՝ Անձնական Գրասենյակի միջոցով կնքված գործարքներից բխող պարտավորությունների կատարման համար:

ԳԼՈՒԽ 4. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԸ

8. Հաճախորդը Գործարք կարող է կատարել, եթե ունի Գործարքին համապատասխան արժույթներով Առևտրային հաշիվներ:

9. Գործարքի կատարումն ապահովելու համար Հաճախորդի Առևտրային հաշվներին անհրաժեշտ է ապահովել Գործարքի գումարին համապատասխան դրամական միջոցների առկայություն: Ընդ որում նշված ապահովման միջոց հանդիսացող դրամական միջոցները կարող են ազատ տնօրինվել Հաճախորդի կողմից Գործարքի առաջարկից հրաժարվելու դեպքում՝ հաշվի առնելով սույն պայմաններով նախատեսված սահմանափակումները:

10. Հաճախորդի կողմից Գործարք կատարելու նպատակով Բանկին ներկայացվում է առաջարկ /արտարժույթի առքի, վաճառքի կամ փոխանակման/, որտեղ հստակ նշվում է Գործարքի գումարի չափը, արժույթները՝ առքի, վաճառքի կամ փոխանակման, առաջարկվող փոխարժեքը և Գործարքի առաջարկի գործողության ժամկետը: Հաճախորդը առաջարկը ներկայացնում է՝ իր Գործարքին համապատասխան հրահանգները կատարելու միջոցով: Բանկը հաստատում է Գործարքը՝ ակցեպտավորելու միջոցով: Ընդ որում, Բանկի կողմից ակցեպտ է համարվում Հաճախորդի Առևտրային հաշվից գումարների գանձումը և համապատասխան Առևտրային հաշվին գումարի մուտքագրումը: Բանկի կողմից առաջարկի մասնակի հաստատման դեպքում չակցեպտավորված մասով առաջարկը շարունակում է դիտարկվել որպես տվյալ չափով Հաճախորդի կողմից ներկայացված առաջարկ:

11. Գործարքի առաջարկի (փոխարժեքի մասով) թույլատրելի շեղումը արտարժույթի առքի կամ վաճառքի դեպքում չի կարող գերազանցել Բանկի կողմից հրապարակված արտարժույթի համապատասխանաբար առքի կամ վաճառքի փոխարժեքի 25%-ը՝ Առաջարկի ներկայացման պահի դրությամբ:

12. Բանկը Առևտրային հաշիվը հեռավար սպասարկելու համար գանձում է Բանկի կողմից սահմանված չափով վճար՝ համաձայն Բանկի կողմից հրապարակված սակագների: Ընդ որում, սույն կետով սահմանված վճարը գանձվում է ՀՀ դրամով:

13. Հաճախորդը տալիս է Բանկին իր անհետկանչելի հանձնարարականը Առևտրային հաշվի հեռավար սպասարկման վճարը գանձել Գործարքի արդյունքում իր Առևտրային հաշվին փոխանցված գումարից, որն արտարժույթով արտահայտված լինելու դեպքում նշված վճարը հաշվարկվի Բանկի կողմից հրապարակված առքի փոխարժեքով:

14. Հաճախորդի կողմից Գործարքի առաջարկը սահմանափակված չէ ժամկետով, բացառությամբ սույն պայմաններով նշված դեպքի, սակայն Հաճախորդը կարող է մինչև Բանկի կողմից այդ առաջարկն ընդունելը /Գործարքը հաստատելը/ հրաժարվել իր առաջարկից:

15. Գործարքի առաջարկը չի կարող ներկայացվել շաբաթ և կիրակի օրերին, իսկ ուրբաթ օրը՝ ժամը 00:00-ից հետո, մինչ այդ ժամը ներկայացված, սակայն չակցեպտավորված Գործարքի առաջարկը համարվում է Բանկի կողմից մերժված: Երկուշաբթի օրը Գործարքի առաջարկը կարող է ներկայացվել սկսած ժամը 00:00—ից:

16. Գործարքը սահմանափակված է նվազագույն գումարային չափով, մասնավորապես Հաճախորդի կողմից կարող է Գործարքի կատարման առաջարկ ներկայացվել նվազագույնը 4,000 ՀՀ դրամին համարժեք արտարժույթի չափով գումար մինչև 31.12.2025թ. իրականացվող գործարքների դեպքում և 200,000 ՀՀ դրամին համարժեք արտարժույթի չափով՝ 31.12.2025թ-ից հետո իրականացվող գործարքների դեպքում: Նշված սահմանաչափից պակաս ներկայացված Գործարքի առաջարկը Բանկի կողմից չի դիտարկվում և համարվում է ներկայացման պահից մերժված:

17. Բանկի կողմից Հաճախորդի Գործարքի կնքման առաջարկը հաստատվում է հիմք ընդունել ներկայացված Գործարքի կատարման փոխարժեքը, Հաճախորդի կողմից արտարժույթի վաճառքի գործարքի առաջարկ ներկայացվելու դեպքում առաջնահերթությունը տրվում է ավելի ցածր փոխարժեք ներկայացված առաջարկին, իսկ Հաճախորդի կողմից արտարժույթի առքի Գործարքի առաջարկ ներկայացվելու դեպքում՝ ավելի բարձր փոխարժեք ներկայացված առաջարկին:

18. Բանկը Հաճախորդի կողմից ներկայացված Գործարքի առաջարկը կարող է հաստատել նաև մասնակի: Մասնակի հաստատման դեպքում առաջարկի չբավարարված մասով Բանկը գործում է Պայմանների 10-րդ կետին համապատասխան:

19. Հաճախորդների կողմից ներկայացված միևնույն արժույթի Գործարքի կնքման առաջարկները հաստատվում է Բանկի կողմից առաջնահերթությունը տալով առավել վաղ ներկայացված առաջակին:

20. Բանկի կողմից Հաճախորդի Գործարքի կատարման առաջարկը հաստատվելու դեպքում Հաճախորդի կողմից Գործարքից հրաժարվելու դեպքում Հաճախորդը Բանկին վճարում է տուգանք հաստատված գործարքի գումարի 10 տոկոսի չափով, որը Բանկը իրավունք ունի գանձել Հաճախորդի Բանկում գործող բոլոր Բանկային հաշիվներից անակցեպտ կարգով, ՀՀ դրամով՝ փոխարկման համար հիմք ընդունել Բանկի վաճառքի փոխարժեքը: Առևտրային հաշվին Գործարքի հաստատման պահին սույն կետում նշված չափով գումարի բացակայության դեպքը ևս համարվում է Գործարքից հրաժարում:

21. Հաճախորդը համաձայնություն տալով Պայմաններին տալիս է իր անհետկանչելի հանձնարարականը Բանկին՝ իր Բանկային հաշիվներից անկացեպտ կարգով գանձել և իր Առևտրային հաշիվներին մուտքագրել Գործարքների համար անհրաժեշտ չափով գումարներ, ինչպես նաև տուգանքի գումարը:

22. Հաճախորդը համաձայնություն տալով Պայմաններին և կատարելով Գործարքներ՝ գիտակցում և ընդունում է արտարժույթով կատարվող Գործարքների փոխարժեքների տատանման արդյունքում վնասների կրման ռիսկը:

ԳԼՈՒԽ 5. ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ

23. Առևտրային հաշիվների և Բանկային հաշիվների կցումից հետո Հաճախորդի կողմից յուրաքանչյուր անգամ Անձնական գրասենյակ մուտք գործելու համար գեներացված Օգտանվան և Գաղտնաբառի մուտքագրումը համարվում է Հաճախորդի պատշաճ նույնականացում և բավարար է Հաճախորդի հետ Պայմանների կիրառմամբ գործարար հարաբերություն հաստատելու համար և Բանկի հետ Գործարքներ կնքելու, Բանկին վճարման հանձնարարականներ, դիմումներ ներկայացնելու համար, եթե Բանկն այլ լրացուցիչ պայմաններ չի սահմանել:

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՐՈՇ ԿԱՆՈՆՆԵՐ

24. Առևտրային հաշիվների և Բանկային հաշիվների կցելուց հետո Անձնական գրասենյակ մուտք գործելու համար անհրաժեշտ Օգտանվան և Գաղտնաբառի մուտքագրումը/կենսաչափական (այդպիսի տեխնիկական հնարավորության դեպքում) նույնականացումը դիտվում է որպես էլեկտրոնային ստորագրություն և տալիս է Հաճախորդին իր Գործարքների վերաբերյալ տեղեկատվության դիտման և Բանկի հետ Գործարք, վճարման հանձնարարականներ կատարելու հնարավորություն:

Բանկն իր հայեցողությամբ ժամանակ առ ժամանակ կարող է սահմանել Անձնական գրասենյակում Առևտրային հաշիվների և Բանկային հաշիվների տնօրինման լրացուցիչ հավաստագրման պահանջ՝ Բանկի կողմից սահմանված քայլերի իրականացման միջոցով:

Յուրաքանչյուր գործառնություն /Գործարք, դիմում, հանձնարարություն/ Հաճախորդի կողմից կատարվում է էլեկտրոնային եղանակով՝ Անձնական Գրասենյակում համապատասխան դաշտերում Գործարքների պայմանները լրացնելու և հաստատելու միջոցով:

Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ սույն կետով նկարագրված էլեկտրոնային եղանակով ստորագրությունը հավասարազոր է և ունի նույն իրավաբանական ուժը, ինչ իր ձեռագիր ստորագրությունը, իսկ սույն կետով նկարագրված էլեկտրոնային եղանակով ստորագրված էլեկտրոնային փաստաթղթերը առաջացնում են տվյալ փաստաթղթի բովանդակությունից բխող իրավական հետևանքներ:

Հաճախորդը, համաձայնություն տալով Պայմաններին, Բանկին տալիս է նաև իր անվերապահ համաձայնությունը, Առևտրային հաշիվները և Բանկային հաշիվները մեկ անգամ Պայմաններով սահմանված կարգով կցելուց հետո, Օգտանվան և Գաղտնաբառի միջոցով Անձնական գրասենյակ մուտք գործելու դեպքում իր հետ իրավահարբերությունների մեջ մտնել, գործարքներ կնքել, վճարման հանձնարարականներ ընդունել իր անունից և վերոնշյալ կարգով Անձնական գրասենյակ մուտք գործելը ընդունել որպես պատշաճ նույնականացում:

25. Անձնական Գրասենյակի միջոցով գործարքները կնքված են համարվում Պայմաններով սահմանված կարգով նույնականացում անցած Հաճախորդի կողմից Անձնական Գրասենյակում Գործարքի կնքմանն ուղղված համապատասխան քայլերի հերթականության կատարմամբ, և Բանկի կողմից գործարքի հաստատմամբ:

26. Հաճախորդը, Անձնական Գրասենյակ մուտք գործելու համար նախատեսված գաղտնաբառը և/կամ Անձնական Գրասենյակ մուտք գործելու հնարավորությունը երրորդ անձանց համար որևէ ձևով հասանելի դարձնելով (ներառյալ մուտք գործելու համար նախատեսված գաղտնաբառը և/կամ Անձնական Գրասենյակ մուտք գործելու հնարավորությունը երրորդ անձանց հասանելի չդառնալու հարցում բավարար հոգատարություն չցուցաբերելու դեպքում), երրորդ անձանց լիազորում է Անձնական Գրասենյակի օգտագործմամբ իր անունից **իրականացնել** Գործարքներ (հնարավոր ցանկացած պայմաններով), տալիս է իր համաձայնությունը այդ Գործարքներին և ընդունում, որ դրանցով իրավունքներ ու պարտականություններ առաջանում են հենց իր՝ Հաճախորդի, համար:

27. Հաճախորդի կողմից Պայմաններով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու, ինչպես նաև Բանկի մոտ Անձնական Գրասենյակի ապօրինի օգտագործման կասկածի դեպքում Բանկն իրավունք ունի Հաճախորդի համար արգելափակել Անձնական Գրասենյակի հասանելիությունը:

28. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից Պայմաններով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու արդյունքում, ինչպես նաև ոչ իր մեղքով Հաճախորդի կրած վնասների համար:
29. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ Պայմաններով նախատեսված պահանջների պահպանումը բխում է իր շահերից, իսկ դրանք չկատարելը կարող է հանգեցնել բացասական հետևանքների, ընդհուպ մինչև դրամային պարտավորությունների առաջացման, այդ թվում՝ խարդախությունների կամ զեղծարարությունների հետևանքով առաջացած, որի համար Բանկը պատասխանատվություն չի կրում:
30. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ Անձնական Գրասենյակ մուտք գործելու համար նախատեսված գաղտնաբառը երրորդ անձանց համար հասանելի դառնալու դեպքում գործում է այն՝ Հաճախորդի դրսևորած վարքագծի արդյունքում երրորդ անձանց հասանելի դառնալու կանխավարկածը:
31. Բանկը, հավատարիմ լինելով իր առաքելությանը, պահպանելով ամենաբարձր էթիկական և կարգավորող չափանիշները, պատասխանատու գործունեություն է իրականացնում և երաշխավորում է, որ ո՛չ Բանկը, ո՛չ էլ Բանկի ծառայությունները ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեն օժանդակում կիրառելի միջազգային պատժամիջոցների և/կամ սահմանափակումների խախտմանը/շրջանցմանը:
32. Բանկը, լինելով միջազգային ֆինանսական համակարգի պատասխանատու մասնակից, միևնույն ժամանակ առավել բարձր գնահատելով և պաշտպանելով հաճախորդների շահերը, անվտանգությունը և նրանց գործունեության անընդհատությունը, հետևում է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի, Եվրոպական Միության, Միացյալ Թագավորության, Միացյալ Նահանգների և այլ միջազգային պատժամիջոցներին և/կամ սահմանափակումներին:
33. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ պատժամիջոցների քաղաքականությունը արգելում է հաճախորդների ցանկացած գործունեություն, որը կխախտի կիրառելի պատժամիջոցները և/կամ սահմանափակումները: Նման գործողությունների արդյունքում կմերժվեն փոխանցումների/գործարքների իրականացումը, ինչպես նաև Բանկը կարող է հրաժարվել այդ հաճախորդներին սպասարկելուց:

ԳԼՈՒԽ 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

34. Սույն պայմաններով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Բանկի կողմից հրապարակված կանոններով, սակագներով, պայմաններով և/կամ Հաճախորդի և Բանկի միջև կնքված պայմանագրերով, համաձայնագրերով, համաձայնություններով, Համակարգի կանոններով, Անձնական գրասենյակի օգտագործման պայմաններով: